**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի ապրիլի 25-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ**-25/49

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կարիքների համար լաբորատոր կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/49 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ** N 1: Գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել:

**Փոփոխության նկարագրություն**: տեխնիկական բնութագիրը անհրաժեշտ է շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ կերպ.

«Սեղան-լվացարան՝ ջրակայուն, չափերը (ԽxԼxԲ) 460 մմx620մմx870մմ, տեղադրվող հատակին (ոտքերի վրա), լվացարանը կերամիկայից, Պահարանը քաշվող դարակներով, դարակների քանակը 3: Սեղան-լվացարանը համալրվում է՝ - տաք և սառը ջրի խառնիչով ծորակով, - սիֆոնով՝ ծալքավոր՝ կոյուղու միացման համար, - ճկափողով ջրամատակարարման համակարգին միանալու համար: Ապրանքի արժեքը ներառում է տեղափոխումը մինչև նախատեսված վայր, ինչպես նաև հավաքման և տեղադրման ծառայությունը: Գույնը և վերջնական տեսքը ըստ պատվիրատուի պահանջի: Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 12 ամիս:»:

**Փոփոխության հիմնավորում**: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Թադևոսյանին:

**Հեռախոս՝** +374 98 389689 (ներքին հեռախոսահամար՝ 09)
**Էլ. փոստ՝** a.tadevosyan@promotion.am
**Պատվիրատու՝** «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ